ԱԲՈՒ-Լ-ՖԻԴԱ

Իսմայիլ իբն Ալի Իմադադդին Աբու-լ-Ֆիդա արաբ պատմագիրն ու աշխարհագիրը Սալահադդինի հոր՝ Այուբի սերունդից էր. ծնվել է 1273 թվականին Դամասկոսում։

Նա փոքր տարիքից ստացավ զինվորական և գրական կրթություն. մասնակցեց մի շարք արշավանքների ու պատերազմների։ 1310 թվականին սուլթան Մալիք Նասրը նրան վարձատրեց Համաթի իշխանությամբ՝ ի դիմաց այն ծառայությունների որ մատուցել էր նա, կռվելով սուլթանի հակառակորդի՝ Բիբարսի և մոնղոլների դեմ։ Աբու-լ-Ֆիդան մեռավ 1333 թվականին, քսան տարի իշխելով Համաթում։

Նրա գլխավոր գործը՝ «Համառոտ պատմություն մարդկային ցեղի», որը տարեգրության ձև ունի, սկսվում է առասպելական ժամանակներից և ավարտվում 1328 թվականին։ Այդ ընդարձակ աշխատությունը նախորդ պատմագիրների գործերի մի կոմպիլիացիա է, և շատ դժվար է ճշտել, թե այստեղ որն է իրապես հեղինակի բաժինը։

Նրա երկրորդ կարևոր գործն է «Աշխարհագրությունը»։

Աբու-լ-Ֆիդայի նկարագրությունները ինքնատիպ են, առավելապես այն երկրների վերաբերմամբ, որտեղ ինքն անձամբ է եղել, ինչպես՝ Ասորիքը, Եգիպտոսը, Արաբիայի մի մասը, Կապադովկիան՝ մինչև Կեսարիա։ Մնացած երկրների մասին, որտեղ ինքը չի եղել, նա, ինչպես հայտնի է, օգտագործել է իրենից առաջ ապրած բազմաթիվ աշխարհագիրների գործերը, որոնցից են Իբն-Հավկալը, Յակուբին և ուրիշներ։

Աբու-լ-Ֆիդայի «Ժամանակագրության» այն մասերը, որոնք վերաբերում են Հայաստանին, հայերին և հարևան երկրներին, թարգմանել ենք արաբերեն բնագրի Կ. Պոլսում 1860 թվականին կատարված հրատարակությունից։